

Մասնագիտության նկարագիրը

Պաշտոնի /գբաղմունքի/
անվանումը

Էլեկտրատեղակցող

I. Դերը

Ձեռքի եռակցման էլեկտրատեղակցողը էլեկտրական աղեղի օգնությամբ և եռակցման սարքավորումների (բացառությամբ կիսաավտոմատ և ավտոմատ սարքերի) սպասարկմամբ, ենթակարգաբերմամբ, եռակցման թերությունների բացահայտմամբ, վերացմամբ և կանխմամբ եռակցում, մակահալում և եռալցնում է, ինչպես նաև նորոգում սև մետաղներից պատրաստված շինվածքամասեր (մանրամասեր) և հանգույցներ՝ սեփականության տարբեր ձև ունեցող կազմակերպություններում, ինչպես նաև անհատ ձեռներեցությամբ զբաղվելիս:

II. Խնդիրների բնագավառները

Խնդիրների բնագավառ 1. Աշխատանքային գծագրերի ընթերցում, եռակցման պայմանական նշանների վերծանում, աշխատանքային գծագրերի պատկերում:

Աշխատանքային գործընթացը

1. Գծագրության տարրերով գծագրի ձևավորում:
2. Երկրաչափական տարրերի և պատկերների կառուցումներ:
3. Տիպային մանրամասերի պրոեկցիաների և աքսոնոմետրիկ կառուցումներ, դրանցում կտրվածքների պատկերում:
4. Աշխատանքային գծագրերում պայմանական նշանների պատկերում:
5. Չափումների, չափանշումների, չափադրումների կատարում, պարզագույն տիպային աշխատանքային գծագրերի և էսքիզների պատկերում:

	6. Աշխատանքային գծագրերի ընթերցում, եռակցման հանգույցների որոշում, եռակցման պայմանական նշանների վերծանում:
Կատարման չափանիշներ	Աշխատանքային գծագրերում եռակցման հագույցները բացահայտված են, աշխատանքային գծագրերը, էսքիզները պատկերված են, չափումները, չափադրումները կատարված են, եշխատանքային գծագրերը ընթերցված են, եռակցման պայմանական նշանները վերծանված են:
<u>Խնդիրների բնագավառ 2. Էլեկտրական շղթաներ, դրանց պարամետրերի որոշում:</u>	
Աշխատանքային գործընթացը	<ol style="list-style-type: none"> 1. Էլեկտրատեխնիկայի հիմնական օրենքները և հիմնական պարամետրերի բանաձևային որոշում: 2. Էլեկտրական շղթայի տարրերի պարզաբանում, պարզ էլեկտրական շղթաների պատկերում և հավաքում՝ պահպանելով անվտանգության կանոնները; 3. Էլեկտրական պարամետրերի չափիչ սարքեր, դրանցով չափումների կատարում՝ պահպանելով անվտանգության կանոնները:
Կատարման չափանիշներ	Պարզագույն էլեկտրական շղթան պատկերված է և հավաքված, էլեկտրական պարամետրերը բանաձևային և չափիչ սարքերով որոշված են, անվտանգության կանոնները պահպանված են:
<u>Խնդիրների բնագավառ 3. Նյութեր, դրանց դասակարգումը, ըստ հատկությունների, կառուցվածքի և բաղադրության նյութերի տարբերակում:</u>	
Աշխատանքային գործընթացը	<ol style="list-style-type: none"> 1. Նյութերի տեսակների, դրանց կառուցվածքների և հիմնական հատկությունների պարզաբանում: 2. Եռակցման աշխատանքներում կիրառվող սև մետաղներ, դրանց հատկությունների պարզաբանում:

	<p>3. Եռակցման աշխատանքներում կիրառվող գունավոր մետաղներ, դրանց հատկությունների պարզաբանում:</p> <p>4. Եռակցման աշխատանքներում կիրառվող ոչ մետաղներ, դրանց հատկությունների պարզաբանում:</p> <p>5. Ըստ հատկությունների, կառուցվածքի և բաղադրության նյութերի տարբերակում:</p> <p>6. Եռակցման աշխատանքներում կիրառվող պրոֆիլների տեսակների պարզաբանում:</p>
<p>Կատարման չափանիշներ</p>	<p>Նյութերը, դրանց տեսակները, ագրեգատային վիճակները, հիմնական հատկությունները, պողպատների, թուջերի, գունավոր մետաղների, ոչ մետաղների կառուցվածքը, բաղադրությունը, դրանց ֆիզիկական, մեխանիկական, քիմիական և տեխնոլոգիական հատկությունները ներկայացված են, ըստ հատկությունների, կառուցվածքի և բաղադրության նյութերը տարբերակված են: Պրոֆիլների և գլոցվածքների երկրաչափական տարրերը ներկայացված են և տարբերակված :</p>
<p align="center">Խնդիրների բնագավառ 4. Ձեռքի էլեկտրատեռակցման սարքեր եվ պարագաներ, եռակցման շղթայի հավաքակցում</p>	
<p>Աշխատանքային գործընթացը</p>	<p>1. Ձեռքի էլեկտրատեռակցման սարքերի կառուցվածքի և աշխատանքի սկզբունքի պարզաբանում, գործարանային մականիշի վերծանում,</p> <p>2. Ձեռքի էլեկտրատեռակցման պարագաները, դրանց կիրառման սկզբունքների պարզաբանում, էլեկտրողների մականիշների վերծանում,</p> <p>3. Ձեռքի էլեկտրատեռակցման կետի շղթայի հավաքակցում պահպանելով անվտանգության կանոնները:</p>
<p>Կատարման չափանիշներ</p>	<p>Ձեռքի էլեկտրատեռակցման սարքերի կառուցվածքը և աշխատանքի սկզբունքը պարագաների տեսակները, կիրառման սկզբունքները պարզաբանված են,</p>

	<p>էլեկտրոդների մակնիշավորումները վերծանված են, շղթան հավաքակցված է, անվտանգության կանոնները պահպանված է:</p>
<p>Խնդիրների բնագավառ 5. Ձեռքի եռակցման էլեկտրատեղակցողի աշխատատեղի կազմակերպում եվ եռակցման աշխատանքների նախապատրաստում</p>	
<p>Աշխատանքային գործընթացը</p>	<ol style="list-style-type: none"> 1. Համաձայն անվտանգության պահանջների ձեռքի եռակցման էլեկտրատեղակցողի եռակցման կետի կահավորում, 2. Աշխատանքը սկսելուց առաջ, ընթացքում, ավարտելուց հետո և վթարային պայմաններում անվտանգության կանոնների պարզաբանում: 3. Էլեկտրատեղակցողի անհատական պաշտպանության միջոցների կիրառում, 4. Եռակցման սարքի շահագործում, եռակցողի հիմնական և ձեռքի էլեկտրական գործիքների կիրառում՝ պահպանելով անվտանգության կանոնները, 5. Նախապատրաստվածքի, շեղատում, մաքրամշակում՝ պահպանելով անվտանգության կանոնները:
<p>Կատարման չափանիշներ</p>	<p>Էլեկտրատեղակցողի եռակցման կետը կահավորված է, անվտանգության կանոնները պարզաբանված են, էլեկտրատեղակցողի անհատական պաշտպանության միջոցները, հիմնական և ձեռքի էլեկտրական գործիքները կիրառված են, եռակցման սարքը շահագործված է, անվտանգության կանոնները պահպանված է:</p>
<p>Խնդիրների բնագավառ 6. Աղեղի գրգռում, կարանների տարբեր դիրքերում սև մետաղներից շինվածքամասերի ձեռքի աղեղային եռակցում,</p>	
<p>Աշխատանքային գործընթացը</p>	<ol style="list-style-type: none"> 1. Աղեղի գրգռում, 2. Շինվածքամասերի եվ կարանների տարբեր դիրքերում ձեռքի աղեղային եռակցում պահպանելով անվտանգության կանոնները,

	3. Կարի մաքարամշակում և որակի ստուգում պահպանելով անվտանգության կանոնները:
Կատարման չափանիշներ	Կարանների տարբեր դիրքերով, շինվածքամասերը տարբեր դիրքերում եռակցված են, կարերը մաքրամշակված են, կարերի որակները ստուգված են, անվտանգության կանոնները պահպանված են:
Խնդիրների բնագավառ 7. Սեվ մետաղների մակահալում, եռալցում եվ նորոգում	
Աշխատանքային գործընթացը	<ol style="list-style-type: none"> 1. Թուջերի ձեռքի էլեկտրաաղեղային սառը եռակցում՝ պահպանելով անվտանգության կանոնները: 2. Թուջերի ձեռքի էլեկտրաաղեղային տաք եռակցում՝ պահպանելով անվտանգության կանոնները: 3. Պողպատաթերթի վրա կարկատանների եռակցում՝ պահպանելով անվտանգության կանոնները: 4. Պողպատաթերթի ճաքերի եռալցում՝ պահպանելով անվտանգության կանոնները:
Կատարման չափանիշներ	Թուջերը էլեկտրաաղեղային սառը և տաք սառը եռակցված են, Պողպատաթերթի կարկատանները և ճաքերը եռալցված են, անվտանգության կանոնները պահպանված են:
III. Պատասխանատվությունը /անմիջական պատասխանատվության շրջանակ/	Ձեռքի եռակցման էլեկտրաեռակցողը պատասխանատու է կատարված եռակցման, եռալցման, մակահալման որակի, սեփական պարտականությունների պատշաճ կատարման, իրեն վստահված ձեռքի աղեղային եռակցման միջոցների պահպանման և արդյունավետ շահագործման, ինչպես նաև արտադրական սանիտարահիգիենիկ կանոնների, անվտանգության տեխնիկային կանոնների, հակահրդեհային անվտանգության կանոնների պահանջների

	կատարման համար
IV. Լեզուները	Հայերեն՝ գերազանց. Ռուսերեն՝ լավ. Անգլերեն՝ բավարար.
V. Համակարգիչը	MS word-բավարար Internet Explorer-բավարար
VI. Գիտելիքները	<ul style="list-style-type: none"> ✓ աշխատանքի անվտանգության կանոնները: ✓ նյութեր, դրանց հիմնական հատկությունները: ✓ էլեկտրատեխնիկայի հիմնական օրենքները: ✓ ձեռքի աղեղային եռակցման սարքերի և պարագաների կառուցվածքը: ✓ եռակցման, մակահալման, եռալցման տեխնոլոգիա: ✓ Կարի որակը:
VII. Կարողությունները և հմտությունները	<ul style="list-style-type: none"> ✓ նյութերի տարբերակում, ✓ նախապատրաստվածքների ընտրում, ✓ չափումներ, չափանշումներ, տիպային աշխատանքային գծագրերի պատկերում, ✓ եռակցման միացությունների ձեռքի քղեղային եռակցմամբ հավաքակցում, ✓ Կարանների որակի ստուգում, ✓ Շինվածքամասերի նորոգում:
VIII. Անձի որակական հատկանիշներ	<ul style="list-style-type: none"> • պարտաճանաչություն, կարգապահություն • ուշադրություն, դիտողականություն, նորովի և վերլուծողական մտածողություն • համագործակցելու պատրաստակամություն, հանդուրժողականություն • ստեղծագործ, նորն ընդունելու

պատրաստակամություն, հետաքրքրություն նորագույն տեխնիկայի նկատմամբ

- հասարակական համակեցության կանոնների պահպանում և քաղաքացիական գիտակցությամբ վարքագծի դրսևորում: